

16390

ԾՐԱԳԻՐ - ԿԱՆՈՆԱԳԻՐ
ԱՐՂԸՆԻԻ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ
ՄԻՈՒԹԵԱՆ

ՀԻՄՆՈՒԱԾ 1917 ՅՈՒԼԻՍ 4

ՓՐԱՎԻՏԷՆՍ

«ՀԱՅՐԵՆԻՔ»Ի ՏՊԱՐԱՆ

361

6-90

ԾՐԱԳԻՐ — ԿԱՆՈՆԱԳԻՐ
ԱՐԴՂՆԻԻ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ
ՄԻՈՒԹԵԱՆ

Հիմնուած 1917 Յուլիս 4, Փրավիտէնս
 ՆՊԱՏԱԿ

2002

2010

Աւստրիա - Աւստրիա
Հ. Կ. Կ. Կ. Կ. Կ. Կ.
Կ. Կ. Կ. Կ. Կ. Կ.

Յօդ. 1. — Ընկերութեանս անմիջական նպատակն է՝ Ա. Օգնել իր ծննդավայրին մէջ գտնուող կարօտ հայրենակիցներու, տալով անոնց տուն, հագուստ եւ ուտելիք: Բ. Գործելու ի վիճակի եղողներուն համար գործ հայթայթել. արհեստաւորներուն՝ իրենց արհեստին վերաբերեալ գործիքներ տալ փոխարինաբար:

Յօդ. 2. — Վերականգնել Արդընիի քայքայուած տնտեսականը եւ մշակոյթը հետըզհետէ բանալով այլեայլ աշխատանքի տուներ, հիմնելով համագործակցական ընկերութիւններ, դպրոցներ, դրադարաններ եւայլն:

Յօդ. 3.— Ընկերութեան տրամադրութեան տակ գտնուող բոլոր արդիւնաբերութեանց միջոցներէն գոյացած զուտ շահը ամբողջապէս գործածել ընկերութեան նպատակին համար:

Յօդ. 4. Յարաբերութեան մէջ մտնել Ամերիկայի տարրեր քաղաքներու մէջ գտնուող հայրենակիցներու հետ՝ ապահովելով իւրաքանչիւրին աջակցութիւնը ընկերութեան նպատակը յոռոջ տանելու գործին մէջ: Սիրալիբ վերաբերումի եւ փոխադարձ յարգանքի բարոյական կապ մը ստեղծել մեր անհատական կեանքին եւ յարաբերութեան մէջ: Ինքզինքնիս պատրաստել հայրենիքի կոչին եւ անոր վերաչինութեան համար զոհուելու արամադրութիւնը վառ պահել մեր մէջ:

Յօդ. 5.— Ընկերութիւնս իր անմիջական նպատակը իրագործելու համար, յարմար պարագային՝ իր ծախսով՝ երկիր պիտի զրկէ երկու լիազօր ներկայացուցիչներ, որոնք պիտի հաւաքեն ջարդէն ու տեղահանութենէն ազատ մնացած Արդիւնները եւ գործադրեն յօդ. 1-ի Ա. եւ Բ. արամադրութիւնները, ու այս մասին, ինչպէս նաեւ իրենց կատարած ամբողջ գործունէութեան մասին պար-

539-91



բերաբար տեղեկագրելու են կեդր. մարմնին, եւ այս վերջինն ալ ստացած տեղեկութիւնները հաղորդելու է մասնաճիւղերուն:

ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Յօդ. 6.— Ընկերութեանս կրնան անդամակցիլ Արդիւնները, ուր որ ալ գըտնուին անոնք, տալով առնուազն երկու տոլար մուտք եւ յիսուն սէնթ ամսավրձար: Անոնք որ ասիկ աւելի տալ կը փափաքին իրր նուէր, շնորհակալութեամբ կ'ընդունուի:

Յօդ. 7.— Հրաժարիլ ուզող եւ գժտութիւն ծագեցնող անդամ մը իրաւունք չը պիտի ունենայ կանխապէս վճարած դրամը պահանջելու:

Յօդ. 8.— Ոեւէ անդամ եթէ պատահի որ զեղծումի մէջ բռնուի, կամ ընկերութեան հանդէպ աննպատ գիւրքի մը մէջ գտնուի, օրինական միջոցներով զինք պատժել տալէ՝ եւ ընկերական ատեանի մը առջեւ իր յանցանքը հաստատելէ վերջ պաշտօնապէս արտօսուել զինքը ընկերութենէն:

Յօդ. 9. — Ոեւէ անդամ եթէ երեք ամիս շարունակաբար, առանց բանաւոր

8415-42

պատճառի, իր պարտականութիւնը չի կատարէ, անդամակցութենէ կը դադրի:

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Յօդ. 10. Իւրաքանչիւր մասնաճիւղ իրեն համար կ'ընտրէ վարչութիւն մը 5 անդամէ բաղկացեալ, ատենապետ, ատենադպիր, գանձապահ, հաւաքիչ եւ մէկ խորհրդատու անդամ, որոնք կ'ընտրուին անդամական ժողովի կողմէն գաղտնի, ընդհանուր, հաւասար եւ ուղղակի քուէով:

ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Յօդ. 11. Վարչութիւնը պարտաւոր է չորս շաբաթն անգամ մը թէ անդամական եւ թէ վարչական ժողով դուժարել ընկերութեան ընթացիկ գործերը կարգադրելու համար եւ այս մասին ամիսը անգամ մը անպայման տեղեկագրել Կեդր. մարմնին: Վարչական ժողովը տեղի կ'ունենայ անդամական ժողովէն անմիջապէս յետոյ անոր տուած որոշումները գործադրելու եւ ժողովին խիստ համառօտ տեղեկագրութիւն ղրկելու Կեդր. մարմնին:

Յօդ. 12.— Վարչութեան ատենապետին պարտականութիւնն է անդամական եւ վարչական ժողովները գումարել ժամա-

նակին եւ հսկել անոնց կարգապահութեան, ասկէ զատ, ատենադպիրին հետ ստորագրել պաշտօնական գրութիւններու տակ:

Յօդ. 13.— Ատենադպրի պարտականութիւնն է Ա. ժողովներու որոշումները արձանագրել. Բ. ժողովին տուած հրահանգներուն համաձայն պատրաստել պաշտօնական նամակներ եւ գործադրել զանոնք: Ատենադպիրը իր արամագրութեան տակ ունենալու է երկու տետրակ, առաջինին մէջ ժողովներու արձանագրութիւնը ընելու, իսկ երկրորդին մէջ ընկերութեան անդամներուն անունն ու մականունը, հասցէն ինչպէս նաև ծննդեան տարին նշանակելու համար:

Յօդ. 14.— Գանձապահի պարտականութիւնն է ամիսը անգամ մը հաւաքէն գանձել ընկերութեան անուետով անոր քով հաւաքուած ամբողջ դրամը փոխարէն ստացազիր տալով եւ այդ դրամէն՝ անդամական ժողովի տուած որոշման համաձայն ընկերութեան ընթացիկ ծախքերը ընել եւ այս մասին անդամական ժողովին մէջ մանրամասնօրէն հաշիւ տալէ վերջ մնացած ամբողջ դրամը ղրկել Կեդր. մարմնին, պաշտօնական գրութեան մը

հետ, որուն տակ ատենապետին եւ ատենադպիրին հետ դանձապահն ալ ստորագրելու է, անկէ ստացադիր պահանջելով: Գանձապահը պէտք է որ այդ ստացադիրը ցոյց տայ յաջորդ անդամական ժողովին մէջ:

Յօդ. 15. — Հաւարիչի պարտականութիւնն է ընկերութեան անդամներէն դանձել ամսավճարները, փոխարէն ստացագիր տալով եւ ամսէ ամիս իր քով հաւարուած մուտքն ու անդամավճարները, որու մասին մանրամասնօրէն հաշիւ տալէ վերջ անդամական ժողովին մէջ յանձնելու է գանձապահին, փոխարէն ընկալագիր առնելով:

16. — Խորհրդատու անդամին պարտականութիւնն է ներկայ ըլլալ վարչական ժողովներուն եւ խորհրդակցութիւններ կատարել վարչութեան հետ ժողովին տրուած որոշումները անթերի գործադրելու համար:

Յօդ. 17. — Ընկերութեան թղթակցութիւնները գրուելու են պաշտօնական թղթի վրայ եւ կրելու են ատենապետին ու ատենադպիրին ստորագրութիւնները ինչպէս նաեւ կնիք: Գանձապահը կ'ըստորագրէ պաշտօնական այն գրութիւններ

րուն տակ միայն, որոնք հաշուական բրնոյթ կը կրեն:

Յօդ. 18. — Տարին անգամ մը վարչական ընտրութիւն տեղի պիտի ունենայ, անդամներու կէսէն մէկ աւելի մեծամասնութեամբ:

Յօդ. 19. — Ընտրութենէն յետոյ նախորդ վարչութիւնը ղարտաւոր է ընկերութեան վերաբերեալ բոլոր գործառնութեանց հաշիւը տալ նորընտիր վարչութեան եւ այս վերջինն ալ առաջին անգամական ժողովին ներկայացնելու է իրեն յանձնուած հաշիւները մանրամասնօրէն:

ԿԵՂՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

Յօդ. 20. — Ընկերութիւնը էր ընդհանուր գործերու անօրինութեան համար կ'ունենայ կեղք. մարմին մը, որը կ'ընտրուի պատգամաւորական ժողովին կողմէ ընդհանուր, զաղանի հաւասար եւ ուղղակի քուէով: Ան կը ներկայացնէ «Արդնիի Հայրենասիրական Միութեան» պաշտօնական մարմինը, որուն ղեկավար են այլ եւ այլ քաղաքներու մէջ գտնուող մասնաճիւղերը ընկերութեան մէջ ծաղած ունէ խնդիր կարգադրելու համար:

ՅՕԳ. 21. — Կեղրոնական մարմնի պարտականութիւնն է Ա. ամիսը անգամ մը տեղեկագրութիւն պահանջել մասնաճիւղերէն ինչպէս նաեւ ամսուայ մը ընթացքին այլեւայլ միջոցներէ գոյացած դրամը (յօդ. 11-ի եւ 14-ի տրամադրութեան համաձայն ասոնցմէ իւրաքանչիւրը առանձինն քննելէ յետոյ արձանագրել իւր տրամադրութեան տակ գտնուած պաշտօնական տոմարներուն մէջ: Բ. Ուէէ յանցանքի մը համար ամբաստանուող անգամի մը ընկերութենէն արտաքսուելու պարագան քննել ի ներկայութեան ամբաստանողին եւ ամբաստանուողին եւ ըստ այնմ գործադրել վճիռը: Եթէ ամբաստանողն ու ամբաստանուողը տեղի հեռաւորութեան պատճառով չեն կրնար ներկայ գտնուիլ Կեղր. Մարմնի դիւանին նախաձեռնութեամբ կազմուած ընկերական ատենանին, իրենց ըսելիքները կրնան գրաւոր ընել: Գ. Կազմակերպել Ամերիկայի գանազան քաղաքներուն մէջ գանուող Արդնցիները. հոն՝ ուր 5 Արդնցիներ կ'գտնուին կրնան անոնց մէկ կազմել մասնաճիւղ մը զրկելով անոնց ընկերութեան ծրագիրը եւ հարկ եղած հրահանգները: Եթէ ուէէ քաղաքի մէջ

գտնուող Արդնցիներու թիւը հինգէն պակաս ըլլայ Կեղր. մարմինը աշխատելու է անգամադրել գանոնք իրենց մօտ գտնուող մասնաճիւղին: Դ. Ընտրել երկիր զրկուելիք ներկայացուցիչները, երբ առիթը ներկայանայ, ընդհանուր անդամներու ուղղակի քուէով, ու տալ անոնց պէտք եղած ճանապարհածախսը և ներկայացուցիչները Արդնի հասնելէ վերջ, անոնց հետ ընել զրամական բոլոր առաքումները ու հաշիւները, եւ այս մասին պարբերաբար տեղեկագրել մասնաճիւղերուն:

ՅՕԳ. 22. — Կեղր. Մարմինը կը բաղկանայ եօթը անձերէ, որոնք հաւաքաբար պատասխանատու են ընկերութեան գանձին, եւ անձնապէս ենթակայ՝ Յօդ. 7-ի, 8-ի եւ 9-ի տրամադրութիւններուն:

ՅՕԳ. 23. — Կեղր. մարմինը Պատգ. Ժոզովի կողմէ ընտրուելէ յետոյ անմիջապէս Ժողով կը դումարէ ընտրելու համար Կեղր. Մարմնի դիւանը, որ կը բաղկանայ երեք անձերէ, ատենապետ, ատենադպիր եւ գանձապահ: Միւս չորս անձերը կը մնան խորհրդատու անդամ կեղ. մարմնին:

ՅՕԳ. 24. — Կեղր. Մարմնի ատենապետին պարտականութիւնն է վեց շաբաթը

անգամ մը Կեդր. մարմինը ժողովի հրա-
ւերել ևւ հսկել անոր կարգապահու-
թեան. Բ. օրակարգի վրայ գտնուած ուէ
հարցի լուծման համար ատենադպիրին
հետ խորհրդակցելով նախապէս գրել ու-
րիշ քաղաք գտնուող Կեդր. Մարմնի ան-
գամներուն, անոնց գրաւոր կարծիքը առ-
նելու համար. (Խրաքանչիւր անգամի
գրաւոր կարծիքը ուէ հարցի մասին ժո-
ղովին մէջ մէկ քուէ կը ներկայացնէ) :

ՅՕԴ. 25.— Ատենադպրին պարտակա-
նութիւնն է Կեդր. Մարմնի ժողովներուն
որոշումները գրի առնել ևւ զայն յաջորդ
ժողովին մէջ կարգալէ ևւ զիւանին կող-
մէ վաւերացնելէ յետոյ արձանագրել
պաշտօնական տոմարին մէջ. Բ. կարգալ
մասնաճիւղերէն եկած տեղեկագրութիւն-
ները ևւ Կեդր. Մարմնի հասցէով եկած
ուէ կարգի նամակ ինչպէս նաև ուրիշ
քաղաք գտնուող Կեդր. մարմնի անգամ-
ներուն գրաւոր կարծիքը օրակարգի վը-
րայ գտնուած հարցի մասին ևւ պահել
գտնոնք իրրև վաստաթուղթ: Գ. ժողո-
վի տուած որոշումներուն ևւ հրահանգ-
ներուն համաձայն պատրաստել այլեւայլ
տեղեր զրկուելիք գրութիւններ ևւ գոր-
ծագրել գտնոնք իր ևւ ատենապետի ստո-

րադրութիւնով, բացի զրամական խըն-
դիրներէ, որոնց տակ ստորագրելու է նաև
զանձապահը: Գ. Ունենալ տետրակ մը,
որուն առաջին մասին մէջ արձանագրելու
համար ընկերութեան բոլոր անգամնե-
րուն անունները (Խրաքանչիւր մասնա-
ճիւղի անգամները առանձին էջի մը վը-
րայ) ևւ մասնաճիւղերու վարչութեան
հասցէները, իսկ երկրորդ մասին մէջ ար-
ձանագրելու համար Ամերիկայի մէջ
գտնուող ընդհանուր Արդիցիներու անգամ
թէ ոչ անգամ, 1. Անունն ու մականունը.
2. Հասցէն. 3. Մննդեան թուականը, 4.
Ամուսնացած թէ ամուրի: Եւ նոյն տեա-
րակին մէջ տարբեր էջի մը վրայ նշանա-
կել մեռնողներու, տեղափոխուողներու ևւ
Ամերիկայէն մեկնողներու անուններն ու
մականունները ինչպէս նաև թուականը:

ՅՕԴ. 26.— Գանձապահի պարտակա-
նութիւնն է մասնաճիւղերէն Կեդր. Մարմ-
նի անունով եկած զրամները ստանալ ևւ
իր ստորագրութիւնով միայն ընկալագիր
զրկել անոնց: Բ. Ստացած ամբողջ զը-
րամը ընկերութեան անունով, զիւանի
ձեռքով, ամսէ ամիս զրամատան մէջ զը-
նել: Գ. Կեդր. Մարմնի գրաւոր որոշման
համաձայն զրամ զրկել իր, ատենապետի

և ատենադպիրի ստորագրութիւնով: Դ. Ունենալ տոմար մը եւ անոր մէջ կանոնաւորապէս արձանագրել Կեդր. Մարմնի ելեւժուտքը եւ ներկայացնել զայն Կեդր. Մարմնի ժողովներուն:

30Դ. 27. — Կեդր. Մարմնի ուէ պաշտօնական գրութիւն կրելու է ընկերութեան կնիքը:

30Դ. 28. — Կեդր. Մարմինը կը վերընտրուի տարին անգամ մը պատգամաւորական ժողովին կողմէ: Ընտրութեան օրը (Յուլիս 4) նախորդ Կեդր. Մարմինը պարտաւոր է տարուան մը ընթացքին իր կատարած ամբողջ գործունէութեան մասին մանրամասնօրէն բացատրութիւն տալ եւ իր արամագրութեան տակ դանուած ամբողջ փաստաթուղթերը, եւ ընկալազրբերը յանձնել պատգ. ժողովին ու այս վերջինն ալ քննելէ յետոյ գանտը կը յանձնէ նորընտիր մարմինին:

30Դ. 29. — Եթէ Կեդր. Մարմնի անդամներէն ուէ մէկը իր պաշտօնէն հեռանայ ուէ պատճառով՝ Կեդր. Մարմինը անոր տեղ մեծամասնութեան հաւանութիւնով կ'ընտրէ ով որ կ'ուզէ:

30Դ. 30. — Կեդր. Մարմինը պարտաւոր է վեց շաբաթ առաջ հաղորդել պատ.

ժողովի տեղն ու օրը բոլոր մասնաճիւղերուն եւ պահանջել անոնցմէ որ իրենց հաշուեկշիռն ու տեղեկագիրը զրկեն պատ. ժողովին իրենց պատգամաւորին միջոցով:

30Դ. 31. — Իւրաքանչիւր մասնաճիւղ իրաւունք ունի իր անդամներու թիւին համեմատ պատգամաւոր զրկելու: Տասը անդամ ունեցող մասնաճիւղ մը կը զրկէ մէկ պատգամաւոր, քսան ունեցողը՝ երկու եւ: Այն մասնաճիւղերը, որոնց ընդհանուր անդամներու թիւը տասէն պակաս է կրնան պատգամաւոր մը զրկել: Ուէ մասնաճիւղ եթէ ուէ պատճառով չկրնայ իր անդամներու թիւին համեմատ պատգամաւոր զրկել, եւ կամ ճանապարհածախս խնայելու համար չուզէ զրկել մէկէ աւելի պատգամաւոր, կրնայ իրեն համար ներկայացուցիչ մը նշանակել տարբեր քաղաքէ մը, եւ կամ եթէ երկու պատգամաւոր զրկելու իրաւունք ունի կրնայ մէկ մը զրկել երկու ձայնով: Քուէի իրաւունքէ կը զրկուին պատգամաւորները այն մասնաճիւղերուն, որոնք զէթ վերջին պահուն՝ իրենց պատգամաւորին միջոցաւ հաշիւներին

չեն մաքրեր կեղը . Մարմինն հետ :

ՅՕԴ . 32 . — Այս ընկերութիւնը կը դադրի գոյութիւն ունենալէ Ամերիկայի մէջ երբ ընկերութեան ծրագրին 1 եւ 4րդ . յօդուածները կ'իրականանան եւ անդամներու մեծամասնութեան երկիր վերադարձով՝ գործը կը փոխադրուի տեղին վրայ եւ երբ Ամերիկայի մէջ գտնուող անդամներու թիւը կը նուազի չորսի . իսկ եթէ չորսէն աւելի անդամներ գտնուին Ամերիկայի մէջ, այն ատեն անոնք կրնան կազմել օժանդակ մասնաճիւղ մը կապուած ըլլալով տեղին վրայ հաստատուած մարմինին հետ եւ իր տրամադրութեան տակ գտնուած դրամը պարբերաբար զրկել վերոյիշեալ մարմինին :

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ . — «Արդնիի Ուսումնասիրաց Ընկերութեան մասնաճիւղերուն եւ «Արդնիի Վերաշինութեան ընկ .» լիազօր պատգամաւորներուն կողմէ 1917 Յուլիս 4-ին տեղի ունեցած ընդհ . պատգամաւորական ժողովս (որ որչեց այսուհետեւ միացած գործել «Արդնիի Հայրենասիրական Միութիւն») անուան տակ) . մանրամասնօրէն քննելով այս «Ծրագիր-Կանոնագիրը» կը գտնէ զայն օրուայ պահանջին համապատասխան եւ

պաշտօնապէս կը յայտարարէ անոր գործադրութեանը Ամերիկայի մէջ «Արդնիի Հայրենասիրական Միութիւն» անուան տակ կազմուած բոլոր մասնաճիւղերուն համար :

539-91



2013

16380

« Ազգային գրադարան »



NL0049040

0

100

X-90.